«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0015, Սուրբ Գ. Լուսավորիչ 9
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Հեռ.՝ +374 (11) 400 400
Ֆաքս՝ +374 (11) 400 401
էլ. փոստ՝ info@ucom.am
www.ucom.am

Հարգելի Գործընկերներ,

Տեղեկացնում ենք որ «Յուքոմ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն/Պատվիրատու) հրավիրում է բոլոր իրավասու կազմակերպություններին ներկայացնել առաջարկներ՝ հետևյալ ծառայության մատուցման համար. Իրականացնել Ընկերության կողմից նշված պահպանվող օբյեկտների շրջիկ և ֆիզիկական պահպանության ծառայություններ, համաձայն կից պայմանագրի օրինակի և ներկայացված էքսել ֆայլի:

1. Ընդհանուր տեղեկություններ

Ծառայությունների մատուցման հայտ ներկայացնող կազմակերպությունը (այսուհետ՝ «Հայտատու») կնքվելիք պայմանագրի շրջանակներում կստանձնի պարտավորություն ապահովել պահնորդական ծառայություն՝ Պատվիրատուի վաճառքի և սպասարկման կենտրոններում, տվյալների կենտրոններում, պահեստային և այլ տարածքներում, որոնց ցանկը ներկայացված է կից էքսել ֆայլում: Ծառայությունների մատուցումը կազմակերպում և իրականացնում է Պատվիրատուի հետ համաձայնեցված և հաստատված կարգով ու պայմաններով, Օբյեկտում սահմանված՝ Պատվիրատուի ներօբյեկտային, անցագրային և այլ ներքին կանոնակարգերին համապատասխան, աշխատանքների մանրամասները ներկայացված են կից պայմանագրի օրինակում:

2. Իրավասության և որակավորման չափանիշներ

Հայտատուն պետք է բավարարի հետևյալ պայմաններին՝

1) դատական կարգով չի ճանաչվել սնանկ,
2) չունի ժամկետանց պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
3) գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող 3 (երեք) տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
4) ունի համապատասխան գործունեություն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա (ներ) (ներկայացնել անհրաժեշտության դեպքում):

Ընդհանուր և մասնակի փորձառություն՝ մրցույթի մասնակիցը պետք է պատվիրատուի համար գոհացուցիչ կերպով ցույց տա, առ այն, որ հայտատուն ունի.

- Առնվազն 3 /երեք/ տարվա փորձառություն՝ նմանատիպ ծառայությունների մատուցման գծով,
- Առնվազն 1 /մեկ/ համանման պայմանագրի կառավարման փորձ, որը մասնակիցը գոհացուցիչ և էապես ավարտել /կամ իրականացնում/ է վերջին 5 /հինգ/ տարիների ընթացքում,
- Համապատասխան անձնակազմ՝ սույն մրցույթի հրավերով նկարագրված ծառայությունների մատուցման նպատակով:

3. Առաջարկի ներկայացումը

Հայտատուներն իրենց առաջարկը պետք է ներկայացնեն ոչ ուշ, քան 2021թ. Հուլիսի 15-ը, մինչև աշխատանքային օրվա ավարտը՝ ուղարկելով այն ստորև նշված անձանց էլեկտրոնային հասցեներին:

Առաջարկը պետք է ներառի՝

ա) Հայտատուի տվյալները (անվանում, հասցե, ՀՎՀՀ, պատասխանատու անձ, կոնտակտային տվյալներ).

բ) Հայտատու կազմակերպության պորտֆոլիոն (առնվազն հիմք ընդունելով վերը թվարկած պահանջները)

գ) ***Ծառայությունների մատուցման գնային առաջարկը (ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսանալու դեպքում՝ դրա վերաբերյալ նշումով). Գնային առաջարկը պետք է ներկայացվի ըստ բացվածքի /համաձայն պահպանվող օբյեկտների ցանկի/: Գնային առաջարկում, առանձին տողով, պետք է ներկայացնել նաև յուրաքանչյուր լրացուցիչ 1***

(մեկ) ժամ ֆիզիկական պահնորդական ծառայության համար արժեքը, այն դեպքում, երբ Պատվիրատուի ցանկությամբ սահմանված Ծառայությունների մատուցման ժամերից դուրս կպատվիրվեն նաև լրացուցիչ ժամեր կամ կկազմակերպվեն առանձին միջոցառումներ:

դ) Ծառայությունների դիմաց վճարման ակնկալվող պայմանները.

ե) Ծառայությունների մատուցման առնչվող այլ տեղեկություններ և/կամ մեկնաբանություններ.

զ) Առաջարկի վավերականության ժամկետը (առնվազն 45 օր).

4. Կոնտակտային տվյալներ

5. Առաջարկների, հարցերի, տեխնիկական քննարկումների համար կարող եք կապ հաստատել ստորև նշված անձանց հետ.

Գնումների մասնագետ՝ Արմեն Միքայելյան armen.mikayelyan@ucom.am +374 95 988 719

ԳՄԲ ղեկավար՝ Հովակ Պոդոսյան՝ hovak.podosyan@ucom.am +374 44 444 340

Անհրաժեշտության դեպքում Ընկերությունը պատրաստ է կազմակերպել աշխատանքային քննարկումներ՝ Ծառայությունների մատուցմանն ու առաջարկների ներկայացմանն առչնվող հարցերի պարզաբանման նպատակով: